

նկարագրէ Հայ Եկեղեցւոյ կրած տառապանքները այլազգիներէ. զայս կը հաղորդէ Սրբազան Պապին, յուսալով որ ասով վըրտակցութեան շարժում մը պիտի սկսի հանդէպ Հայ Ազգին եւ դիւրութիւն մը պիտի ընծայուի. վասնզի, կը յարէ, օտար չենք, այլ Քրիստոսի արեան գինը, եւ ձեզմով կը պարծինք այլազգիներու մէջ: Եւ կը յաւելու՝ թէ Հայոց կրած տառապանքները կըրնայ բերանացի պատմել Պօղոս Արքեպիսկոպոս Բիրոմայլի, որ փորձով գիտէ նաեւ մեր սիրոյն ճշմարտութիւնը եւ Ձեզի հանդէպ մեր բարեմտութիւնը, որովհետեւ բազմաթիւ տարիներ շրջեցաւ մեր Ազգին մէջ եւ ճանչցաւ ամէն ինչ: Հուսկ կը խնդրէ Սրբազան Քահանայապետէն որ իրեն համար աղօթէ, որպէսզի Աստուած զինք արժանի ընէ մարմնաւոր աչքերով տեսնելու նորին Սրբութիւնը:

Յակոբ Կաթողիկոսի այս ինքնագիր թուղթը գտանք Հաւատոյ Տարածման Դիւանին մէջ: Գեղեցկօրէն գրուած է մազադաթի վրայ, ոսկեգոյն թանաքով: Չայն կը հրատարակենք նոյնութեամբ:

«Է

Երիցս երանեայ եւ նախամեծար Գլխոյ՝ Հանրական Եկեղեցեաց Քրիստոսի, եւ պարծանաց պատճառի քրիստոնէից տոհմի, սրբազնակատար Հովուապետի՝ ըստ ընտրութեան աստուածապետականի, եւ նախազահութեան ունողի՝ Մեծին Պետրոսի Փոխանորդի, վսեմազարդ եւ Սրբազան